ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ.. Պապայանի

Քննության առնելով Արմեն Համամջյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Արմեն Համամջյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով << սահմանադրական դատարանի մասին << օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է << Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են << Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ա. Համամջյանի դիմումը՝ Սահմանադրական դատարանի մասին << օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել << Ազգային ժողովին: